



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՁԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Եկամտային հարկի և սոցիալական
ապահովության վճարների ճեղքերի
գնահատում՝ գործառնական ստուգումների
հիման վրա

ՄԱՐՏ 2025 Թ.

Կազմեցին

Սորեն Պեդերսենը, Թորիաս Գաբել Քրիստիանսենը

Հեղինակող վարչություն՝

Հարկարյուչետային հարցերի վարչություն

Սույն զեկույցը բովանդակությամբ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աշխատակազմի կողմից Հայաստանի իրավասու մարմիններին («ՏՄ ստացող») տրամադրվող տեխնիկական խորհուրդ է, ի պատասխան նրանց՝ տեխնիկական աջակցության դիմումի: ԱՄՀ-ի կողմից սույն զեկույցը (ամբողջությամբ կամ մասամբ) կամ դրանից քաղվածքներ կարող են տրամադրվել ԱՄՀ-ի գործադիր տնօրեններին և վերջիններին աշխատակազմի անդամներին, ինչպես նաև՝ ՏՄ ստացողի այլ մարմիններին և կառույցներին, իսկ նրանց խնդրանքով՝ նաև Համաշխարհային բանկին և տեխնիկական աջակցություն տրամադրող այլ կառույցներին և իրավաչափ շահ ունեցող դոնորներին, եթե ՏՄ ստացողը հատուկ չի առարկում այդպիսի բացահայտմանը (*in situ* Տեխնիկական աջակցության վերաբերյալ տեղեկությունների տարածման վերաբերյալ աշխատակազմի գործառնական ուղեցույցը ([Staff Operational Guidelines on Dissemination of Technical Assistance Information](#)): Սույն զեկույցը (ամբողջությամբ կամ մասամբ) կամ դրանից քաղվածքներ ԱՄՀ-ից դուրս տրամադրելու համար, բացառությամբ ՏՄ ստացողի կառույցների և մարմինների, Համաշխարհային բանկի աշխատակազմի, տեխնիկական աջակցություն ցուցաբերող այլ կառույցների և իրավաչափ շահ ունեցող դոնորների, պահանջվում է ՏՄ ստացողի և ԱՄՀ-ի Հարկաբյուջետային հարցերի վարչության անմիջական համաձայնությունը:

[Սույն տեխնիկական աջակցությունը \(ՏՄ\) տրամադրվել է բազմադոնորային Հանրային ֆինանսների գլոբալ գործընկերության \(GPF\) ֆինանսական օժանդակությամբ:](#)

International Monetary Fund, IMF Publications
P.O. Box 92780, Washington, DC 20090, U.S.A.
T. +(1) 202.623.7430 • F. +(1) 202.623.7201
publications@IMF.org
IMF.org/pubs

Երախտագիտություն



Սույն տեխնիկական աջակցության առաքելությունը հնարավոր է դարձել Հանրային ֆինանսների գլոբալ գործընկերության ([Global Public Finance Partnership](#) (GPFP)) ֆինանսական աջակցության շնորհիվ, որը ֆինանսավորող գործընկերներն են Բելգիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, Լյուքսեմբուրգը, Նիդերլանդները, Շվեդիան, Շվեյցարիան և ՄԹ-ը:

Բովանդակություն

Երախտագիտություն	3
Հապավումներ և կրճատ անվանումներ	5
Նախաբան	6
Անփոփագիր	7
Առաջարկություններ	9
I. Ներածություն	10
II. Հիմնական եզրահանգումներ	14
A. ԵՀ ճեղքի արդյունքներ	14
B. ՄԱՎ ճեղքի արդյունքները	19
III. Հաջորդ քայլեր	21
A. Ստեղծել տվյալների վերլուծաբանների թիմ և կիրառել մշակված մոդելը	21
B. Առաջարկություն	21
Գծապատկերներ	
Գծապատկեր 1. ԵՀ գնահատված ճեղքը (2020-2023)	14
Գծապատկեր 2. ԵՀ ճեղքը ընդհանուր ԵՀ նկատմամբ տոկոսով՝ ըստ 10 գլխավոր ոլորտների (2020-2023 թթ.- միջին)	16
Գծապատկեր 3. ԵՀ հարաբերական ճեղքն՝ ըստ չափի (2020-2023 թթ. միջին)	17
Գծապատկեր 4. ԵՀ հարաբերական ճեղքն՝ ըստ տարիների թվի (2020-2023 թթ. միջին)	17
Գծապատկեր 5. ԵՀ ճեղք. Խոշոր կազմակերպությունների բացառումը (2020-2023)	18
Գծապատկեր 6. ՄԱՎ ճեղքը (2020-2023)	19
Գծապատկեր 7. ՄԱՎ ճեղք. Խոշոր կազմակերպությունների բացառումը (2020-2023)	20
Աղյուսակներ	
Աղյուսակ 1. Մտուցումների քանակը և հաշվարկված գումարները	11
Աղյուսակ 2. Ռեգրեսիայի արդյունքները	25
Հավելվածներ	
Հավելված I. Լրացուցիչ նյութ	22
Հավելված II. ԵՀ ճեղքի գնահատման մեթոդները	26
Հավելված III. Հայաստանի պետական եկամուտների կոմիտեին տրամադրված նյութեր	30

Հապավումներ և կրճատ անվանումներ

ՀՀ ԴՐԱՄ	Հայաստանի Հանրապետության դրամ
ԿԶ	Կարողությունների զարգացում
ՇՀ	Շահութահարկ
ԿՌԿ	Կարգապահության ռիսկի կառավարում
ՀՀՎ	ԱՄՆ հարկաբյուջետային հարցերի վարչություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՖԳԳ	Հանրային ֆինանսների գլոբալ գործընկերություն
ԱՄՇ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՏԳՏԴ	Nomenclature statistique des Activites economiques dans la Communaute Europeenne (Եվրոպական Համայնքում տնտեսական գործունեության տեսակների վիճակագրական դասակարգիչ)
ԵՀ	Ֆիզիկական անձանց եկամտային հարկ
ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՍԱՎ	Սոցիալական ապահովության վճար
ԿԺՓ	ԱՄՆ կարճաժամկետ փոխադրված
ՀՎՀՀ	Հարկ վճարողի հաշվառման համար
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ

Նախաբան

Ի պատասխան Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) դիմումի՝ կարողությունների զարգացման (ԿԶ) առաքելության թիմը, որի կազմում էին պրն. Սորեն Պեդերսենը (ՀՀՎ) և պրն. Թոբիաս Գաբել Քրիստիանսենը (ՀՀՎ-ի կարճաժամկետ փորձագետ), 2024 թ. դեկտեմբերի 16-ից 2025 թ. հունվարի 3-ն ընկած ժամանակահատվածում իրենց ծառայության վայրում իրականացրել են առաքելություն: Սույն առաքելության նպատակը, որը ֆինանսավորվում էր Հանրային ֆինանսների գլոբալ գործընկերության (ՀՖԳԳ, անգլ.՝ GPF) կողմից, ֆիզիկական անձանց եկամտային հարկի (ԵՀ) և սոցիալական ապահովության վճարների (ՄԱՎ) ճեղքերի գնահատումն էր՝ հիմնվելով 2020-2023 եկամտային տարիների գործառնական ստուգումների վրա: Սա հերթական առաքելությունն էր, որը հաջորդեց 2024 թ. սեպտեմբերին կայացած՝ շրջանակի որոշման, ԵՀ/ՄԱՎ ճեղքերի չափորոշման իրագործելիությունն ուսումնասիրող առաքելությանը:

2024 թ. սեպտեմբերի առաքելության ընթացքում ակնհայտ դարձավ, որ ՊԵԿ-ը տիրապետում է աղբյուրի մոտ պահվող ԵՀ և ՄԱՎ հետ կապված ստուգման արդյունքների, ինչպես նաև հարկ վճարողների մանրամասն բնութագրիչների վերաբերյալ ծավալուն տվյալների:

Նախքան ԵՀ/ՄԱՎ ճեղքերի չափորոշման առաքելությունը, ՊԵԿ-ը գործատուների 2020-2023 եկամտային տարիների ԵՀ/ՄԱՎ հաշվարկներից անհրաժեշտ տվյալներ էր տրամադրել: Ձեկույցի եզրահանգումները հիմնված են ՊԵԿ-ի տրամադրած տվյալների վրա:

ԱՄՆ թիմն իր անկեղծ գնահատանքն է հայտնում ՊԵԿ-ին՝ գերազանց համագործակցության և նախքան սույն առաքելությունը տրամադրած գերազանց օժանդակության համար: Մասնավորապես, թիմը շնորհակալություն է հայտնում Զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ պրն. Արսեն Սառիկյանին և նրա անձնակազմին՝ ցուցաբերած գերազանց աջակցության համար: ԱՄՆ թիմը ցանկանում է նաև երախտագիտություն հայտնել նրանց կողմից վերլուծության համար տրամադրված խիստ համապարփակ նյութերի համար:

Սույն զեկույցը 2025 թ. հունվարի 3-ին նախագահի տեղակալ պրն. Աշոտ Հ. Մուրադյանին և Զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ պրն. Արսեն Սառիկյանին տրամադրված զեկույցի նախագծի ավարտուն տարբերակն է: Այն կազմված է ամփոփագրից և հետևյալ բաժիններից՝ (I) Ներածություն, (II) Հիմնական եզրահանգումներ և (III) Հաջորդ քայլեր:

Ամփոփագիր

Սույն առաքելությունը, որը ֆինանսավորվել է Հանրային ֆինանսների գլոբալ հիմնադրամի կողմից (GPF), Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) աշխատակազմի հետ համագործակցությամբ գնահատել է Հայաստանում ֆիզիկական անձանց եկամտային հարկի (ԵՀ) և սոցիալական ապահովության վճարների (ՍԱՎ) ճեղքը «ներքնից վերև» մոտեցմամբ՝ օգտվելով ՊԵԿ-ի գործառնական ստուգումների տվյալներից (2020-2023):¹ 2020-2023 թթ. ընթացքում ԵՀ միջին տարեկան ճեղքը գնահատվում է 14.5 միլիարդ ՀՀ դրամ կամ պոտենցիալ ԵՀ պարտավորության 3.8 տոկոսը: ՍԱՎ միջին տարեկան ճեղքը 2020-2023 թթ. ընթացքում գնահատվում է 0.6 միլիարդ ՀՀ դրամ կամ պոտենցիալ ՍԱՎ պարտավորության 1.6 տոկոսը: Նշված գնահատականները գրանցված կազմակերպությունների և դրանց աշխատավարձերի վճարացուցակում ընդգրկված համապատասխան աշխատողների հետ կապված ԵՀ և ՍԱՎ կարգապահության ճեղքն են: Չգրանցված գործունեության և/կամ չձևակերպված աշխատողների հետ կապված կարգապահության ճեղքը մեր շրջանակից դուրս է:

2020, 2021, 2022 և 2023 թթ. ԵՀ ճեղքը գնահատվում է պոտենցիալ ԵՀ պարտավորության համապատասխանաբար 2.6 տոկոսը, 3.1 տոկոսը, 3.8 տոկոսը և 5.5 տոկոսը, իսկ ՍԱՎ ճեղքը գնահատվում է պոտենցիալ ՍԱՎ պարտավորության համապատասխանաբար 2.8 տոկոսը, 1.5 տոկոսը, 0.7 տոկոսը և 1.8 տոկոսը:² ԵՀ ճեղքի համեմատ ՍԱՎ ճեղքի արդյունքների ավելի մեծ տատանողականությունը պայմանավորված է ՍԱՎ ճշտումների նշանակալիորեն փոքր թվով, ինչը մեծացնում է արդյունքների անորոշությունը:

ԵՀ ճեղքը կազմում է 2020-2023 թթ. միջին ՀՆԱ-ի 0.2 տոկոսը, իսկ ՍԱՎ ճեղքին բաժին է ընկնում նույն ժամանակահատվածի միջին ՀՆԱ-ի 0.003 տոկոսը: 2020, 2021, 2022 և 2023 թթ. ԵՀ ճեղքը գնահատվում է համապատասխանաբար ՀՆԱ-ի 0.1, 0.2, 0.2 և 0.3 տոկոսի չափով: ՍԱՎ ճեղքը գնահատվում է ընդգրկված բոլոր տարիների ՀՆԱ-ի 0.002-0.003 տոկոսի չափով:

Բացարձակ արտահայտությամբ ԵՀ ճեղքը 2023 թ.-ին գնահատվում է 24.1 միլիարդ ՀՀ դրամ, իսկ 2020 թ. այն գնահատվել է 8.9 միլիարդ ՀՀ դրամ, 2021 թ.-ին՝ 10.8 միլիարդ ՀՀ դրամ և 2022 թ. -ին՝ 14.4 միլիարդ ՀՀ դրամ: ՍԱՎ ճեղքը բացարձակ արտահայտությամբ 2020 թ.-ին գնահատվում է 0.5 միլիարդ ՀՀ դրամ, 2021 թ.-ին՝ 0.5 միլիարդ ՀՀ դրամ, 2022 թ.-ին՝ 0.3 միլիարդ ՀՀ դրամ և 2023 թ.-ին՝ 1 միլիարդ ՀՀ դրամ:

¹ Սույն վերլուծությամբ չափվում է ԵՀ/ՍԱՎ կարգապահության ճեղքը, այսինքն՝ քաղաքականության ճեղքը և վճարման ճեղքը ներառված չեն: Պարզության համար՝ սույն զեկույցում «ճեղքը» և «կարգապահության ճեղքը» կօգտագործվեն առանց տարբերակման:

² Պոտենցիալ ԵՀ պարտավորությունը ինքնահայտարարագրած ԵՀ և ԵՀ գնահատված ճեղքի հանրագումարն է: Նույն ձևով, պոտենցիալ ՍԱՎ պարտավորությունը ինքնահայտարարագրած ՍԱՎ-ի և ՍԱՎ-ի գնահատված ճեղքի ընդհանուր մեծությունն է:

ԵՀ ճեղքը պոտենցիալ ԵՀ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ ավելանում է նաև, երբ բացառվում են խոշոր կազմակերպությունները՝ 2020 թ.-ին 0.6 տոկոս, 2021 թ. -ին 1.4 տոկոս, 2022 թ. 2.8 տոկոս և 2023 թ.-ին 4.1 տոկոս ցուցանիշներով: Խոշորագույն կազմակերպությունների բացառմամբ հավանաբար ԵՀ ճեղքի ավելի ճշգրիտ գնահատական է ստացվում: Խոշոր ընկերությունների սահմանափակ թվով պայմանավորված՝ համապատասխան հարկային ճեղքն ավելի մեծ անորոշություն է ենթադրում: Այս ընկերությունների բացառմամբ կարելի է «աղմուկը» նվազեցնել և ստանալ ավելի ճշգրիտ հարկային ճեղք:

Հաջորդ քայլով առաջարկվում է, որ ՊԵԿ-ն ընդունի մեթոդաբանությունը և շարունակի ԵՀ/ՄԱՎ ճեղքի գնահատումը 2025 թ.-ին և գալիք տարիներին: ԱՄՀ թիմի աշխատանքին հետևելուց հետո՝ ՊԵԿ-ի տվյալների վերլուծաբաններն այժմ ունեն այս վերլուծությունը կատարելու հնարավորություն՝ օգտվելով տրամադրված R ծրագրային լեզվով կոդից և մանրամասն հրահանգներից: ՊԵԿ-ը կարող է դիմել նաև ԱՄՀ-ին՝ ԵՀ/ՄԱՎ ճեղքի չափման ինքնազնահատմանն օգնելու համար կարողությունների (ԿԶ) զարգացման խնդրանքով:

Առաջարկություններ

	ԵՀ/ՄԱՎ ճեղքը գնահատել առաջիկա տարիներին	Կատարման ժամկետ
1	<p>Անհրաժեշտ է, որ ՊԵԿ-ն ընդունի մեթոդաբանություն և գալիք տարիներին շարունակի ԵՀ/ՄԱՎ ճեղքի գնահատման կատարումը: ՊԵԿ-ի տվյալների վերլուծաբանները կարող են այդ վերլուծությունը կատարել՝ օգտվելով տրամադրված R ծրագրավորման լեզվով կոդից և մանրամասն հրահանգներից: Մյուս կողմից, ՊԵԿ-ը կարող է դիմել ԱՄՀ-ին՝ 2025/2026 թթ. ձմռանը գործառնական ստուգումների հիման վրա ԵՀ/ՄԱՎ ճեղքի ինքնագնահատմանն օգնելու համար կարողությունների զարգացման (ԿԶ) խնդրանքով:</p>	Հունվար 2026

I. Ներածություն

1. Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) նախագահը դիմել էր ԱՄՆ աջակցության խնդրանքով՝ ֆիզիկական անձանց եկամտային հարկի (ԵՀ) և սոցիալական ապահովության վճարների (ՄԱՎ) ճեղքերը չափորոշելու համար: Այս դիմումը հաստատվել էր 2024 թ. ԱՄՆ-Համաշխարհային բանկ գարնանային ժողովների ժամանակ:

2. Հայաստանի ԵՀ և ՄԱՎ համակարգերը գործում են գործատուների կողմից աղբյուրի մոտ պահվող հարկման կայացած համակարգի շրջանակում:³ Վերջնական ԵՀ/ՄԱՎ-ը պահվում է գործատուի կողմից, էլեկտրոնային եղանակով հայտարարագրվում և ամսական կտրվածքով վճարվում է ՊԵԿ-ին:⁴ Գործատուները, որոնք հայտնի են նաև հարկային գործակալ անվամբ, իրենց հաշվետվություններում ներկայացնում են տեղեկությունների լայն շրջանակ, այդ թվում՝ իրենց աշխատողների անունը և եզակի նույնականացումը:

3. Սույն առաքելության թիմը գնահատել է ԵՀ/ՄԱՎ ճեղքը՝ ՊԵԿ-ի անձնակազմի հետ համագործակցությամբ՝ հիմնվելով «ներքինից վերև» մոտեցման վրա, օգտվելով հարկային գործակալների 2020-2023 թթ. հարկային հաշվարկներից: ԱՄՆ 2024 թ. սեպտեմբերի առաքելության ընթացքում ակնհայտ դարձավ, որ ՊԵԿ-ը աղբյուրի մոտ պահվող ԵՀ և ՄԱՎ հետ կապված ստուգման արդյունքների, ինչպես նաև հարկ վճարողների մանրամասն բնութագրերի վերաբերյալ ծավալուն տվյալների է տիրապետում:⁶ Այս տեղեկությունները հարկային ճեղքի ավելի մանրակրկիտ գնահատականների հնարավորություն են տալիս և օգնում են բացահայտել ոլորտների ներքում առանձնահատուկ խնդիրները, ընկերությունների չափը և այլն:

4. Հարկային ճեղքի գնահատման համար գործառնական ստուգումների կիրառմամբ հարկ է հաշվի առնել, որ ստուգված կազմակերպությունների ընտրությունը պատահականության սկզբունքով չի արվում: Առանց պատահականության սկզբունքով չընտրված դեպքերը շտկելու՝ ԵՀ/ՄԱՎ ճեղքը գերազանցանալով կլինի: Այս կողմնակալությունը, որը «ընտրանքի ընտրության կողմնակալություն» անվամբ է հայտնի, առաջանում է դեպքերի ոչ պատահական ընտրության պատճառով: Տնտեսագետ (և

³ IMF. *Republic of Armenia: Technical Assistance Report on Personal Income Tax: Policy Review and Introduction of a Universal Declaration*. January 2023: <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2023/01/30/Republic-of-Armenia-Technical-Assistance-Report-on-Personal-Income-Tax-Policy-Review-and-528760>

⁴ Ներառում է եկամտի տարբեր տեսակներ, օրինակ՝ աշխատավարձեր, նպաստներ, պարգևավճարներ, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ: 2024 թ. դրությամբ Հայաստանում ֆիզիկական անձանց եկամտային հարկի դրույքաչափը 20 տոկոս էր և տարածվում է վարձատրության բոլոր ձևերի վրա՝ անկախ գումարի չափից:

⁵ ԵՀ-ից զատ, գործատուները պարտավոր են նաև հանել սոցիալական ապահովության վճարումները: 2024 թ. -ի դրությամբ այս վճարների դրույքաչափը 5 տոկոս է մինչև 500,000 ՀՀ դրամ (մոտավորապես 1,309 դոլար) եկամտի համար և 10% -ից հանած 25,000 ՀՀ դրամ այս շեմը գերազանցող եկամտի համար: Կարևոր է իմանալ, որ սոցիալական ապահովության վճարների համար աշխատավարձի առավելագույն չափ կա, որի առավելագույն սահմանը ներկայաումս ամսական 1,125,000 ՀՀ դրամն է (համարժեք է նվազագույն ամսական աշխատավարձի՝ 75,000 ՀՀ դրամի 15-ապատիկին):

⁶ IMF. *Republic of Armenia: Technical Assistance Report—Personal Income Tax and Social Security Contribution Gaps*. January 2025.

Նոբելյան մրցանակի դափնեկիր) Ջեյմս Ջ. Հեքմանի մշակած մեթոդն օգտագործվում է ընտրանքի ընտրության կողմնակալությունը շտկելու համար:⁷

5. ԵՀ/ՄԱՎ ճեղքի գնահատականները հիմնված են ՊԵԿ-ի անցկացրած համալիր ստուգումների վրա: Համալիր ստուգումներով անդրադարձ է կատարվում հարկ վճարողի բոլոր, այդ թվում՝ ԵՀ և ՄԱՎ հարցերին:⁸ Ստուգվում են յուրաքանչյուր տարի ընտրված՝ ստուգման ենթակա հարկ վճարողների նախորդ տարիների չստուգված հարկային հաշվարկները: Ստուգված հարկային հաշվարկների թիվը և հաշվարկված գումարները ներկայացվում են աղյուսակ 1-ում:^{9,10} Հաշվարկված ԵՀ և ՄԱՎ -ի մեծ մասը կապված է այն ստուգումների հետ, որոնց ժամանակ հարկ վճարողները համաձայնել են ստացված արդյունքների հետ և համապատասխանաբար ճշտել են իրենց հարկային հաշվարկները:

Աղյուսակ 1. Ստուգումների քանակը և հաշվարկված գումարները

	2020	2021	2022	2023
Ստուգումների քանակը	2,656	2,373	2,044	1,262
ԵՀ հաշվարկված գումարը	1 միլիարդ ՀՀ դրամ	1.3 միլիարդ ՀՀ դրամ	900 միլիոն ՀՀ դրամ	1.4 միլիարդ ՀՀ դրամ
ՄԱՎ հաշվարկված գումարը	6 միլիոն ՀՀ դրամ	21 միլիոն ՀՀ դրամ	12 միլիոն ՀՀ դրամ	125 միլիոն ՀՀ դրամ

6. Թեմատիկ ստուգումները և թեմատիկ ուսումնասիրությունները ԵՀ/ՄԱՎ ճեղքի հաշվարկման համար չեն օգտագործվում: Թեմատիկ ստուգումները չհայտարարված ստուգումներ են, որոնց նպատակը չգրանցված աշխատողների բացահայտումն է: Թեմատիկ ստուգումների ընթացքում ԵՀ ճշտումներ չեն ներկայացվում: Փոխարենը, չգրանցված յուրաքանչյուր աշխատողի համար 250,000 ՀՀ

⁷ James J. Heckman (1979). “Sample Selection Bias as a Specification Error”. *Econometrica*. vol. 47(1), pp. 153-161.

⁸ Ստուգումները ներառում են ԵՀ բոլոր կարգավորումները և հարկային հաշվարկի բոլոր բաժինները:

⁹ Կարևոր է նշել, որ 2020-2022 թթ. ընթացքում անցկացված ստուգումների մոտավորապես 75 տոկոսն ընդգրկում է 10 ամսվա կամ ավելի երկար ժամանակահատված: Մակայն որոշ ստուգումներ հնարավոր է, որ ներառեն միայն կարճ, օրինակ՝ 3 ամսվա ժամանակահատված: Սույն զեկույցի գնահատականներում այս տատանումները հաշվի առնելու համար ճշտումներ չեն կատարվում:

¹⁰ 2020 -ից 2023 թթ. -ին ստուգված կազմակերպությունների տոկոսը կազմում էր համապատասխանաբար 3.5%, 3.3%, 3.0%, և 2.8%: Ի տարբերություն նշվածի, նույն ժամանակահատվածում ստուգված եկամտների տոկոսը զգալիորեն բարձր էր՝ համապատասխանաբար 55.8%, 55.7%, 53.6% և 50.5%: Օրինակ՝ 2023 թ. ստուգվել է 1,262 ընկերություն (աղյուսակ 1): Ստուգված 1,262 կազմակերպությունները հայտարարագրել են մոտավորապես 210 միլիոն ՀՀ դրամի ընդհանուր ԵՀ: Այն կազմում է 2023 թ. -ին 413 տրիլիոն ընդհանուր ԵՀ-ի 50.5%-ը:.

դրամի չափով տուգանք է նշանակվում: Ավելին, ռիսկայնության չափանիշները, որոնք կիրառվում են թեմատիկ ստուգումների ընտրության համար, առկա չեն՝ Հեքմանի մեթոդը դարձնելով ոչ տեղին: Թեմատիկ ուսումնասիրությունները ներդրվել էին 2022 թ. -ին և կազմված են կամերալ տեսակի ստուգումներից, որոնց ընտրությունը կատարվում էր նույն՝ թեմատիկ ստուգումների չափանիշներով:

7. Սույն զեկույցում ներկայացված են ԵՀ և ՄԱՎ կարգապահության ճեղքերի գնահատականները, որոնք կապված են գրանցված կազմակերպությունների և նրանց աշխատավարձի վճարացուցակում ներառված համապատասխան աշխատողների հետ: Չգրանցված բիզնեսների և /կամ չձևակերպված աշխատողների հետ կապված կարգապահության ճեղքը ներառված չէ, քանի որ թեմատիկ ստուգումները և թեմատիկ ուսումնասիրությունները, ինչպես վերը բացատրվել է, հարմար չեն Հեքմանի մեթոդի համար: Սա հանգեցնում է ընդհանուր հարկային ճեղքի թերագնահատման:

8. Չգրանցված աշխատողների ԵՀ/ՄԱՎ ճեղքը գնահատելու համար պետք է կիրառել այլ մեթոդներ: Առաքելության ավարտին ՊԵԿ-ը նշել է, որ իրենց կողմից կիրառվել է այսպես կոչված «աշխատանքային ծախսերի մեթոդը», որով Աշխատուժի հետազոտության զբաղվածության վիճակագրությունը համեմատվում է ՊԵԿ-ի զգաղվածության սեփական վիճակագրության հետ, ինչպես առաջարկվել էր 2024 թ. սեպտեմբերի շրջանակի որոշման առաքելության ընթացքում: ՊԵԿ-ը ներկայացրել է, որ նրանց ստացած արդյունքները համահունչ էին սույն զեկույցում ներկայացված արդյունքներին: ¹¹ Այստեղ նշված մեթոդի, ինչպես նաև այլ մեթոդների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները, որոնք կարելի է կիրառել չգրանցված զբաղվածությունն արտացոլելու համար, տե՛ս Հավելված II-ում:

9. 2020-2023 թթ. ԵՀ/ՄԱՎ ճեղքը գնահատվել է Հեքմանի ընտրանքի ընտրության մոդելի կիրառմամբ: Հեքմանի մեթոդը երկփուլ ընթացակարգ է: Առաջին փուլով գնահատվում է ընկերության՝ ստուգման համար ընտրվելու հավանականությունը: Սա կատարվում է պրոբիտ (probit) մոդելի կիրառմամբ և ռիսկայնության հանրագումարի բերված 30 միավորով և ռիսկի դասակարգումներով, որոնք ՊԵԿ-ի կողմից օգտագործվում են ԵՀ/ՄԱՎ ստուգումների նպատակադրման համար:^{12 13} Երկրորդ փուլով մոդելավորվում է ստուգման վերջնարդյունքը (այսինքն՝ հայտնաբերված ԵՀ/ՄԱՎ-ը)՝ օգտագործելով ընկերության բնութագրիչները (այսինքն՝ հարկային հաշվարկի տողերը, ոլորտը, աշխատողների թվաքանակը և այլն) և ռեգրեսիայի անկախ փոփոխականը, որով հաշվի է առնվում ընտրության գործընթացը (լրացուցիչ մանրամասները տե՛ս Հավելված I-ում):

¹¹ ԱՄՀ թիմը ՊԵԿ-ի կողմից օգտագործված աշխատանքային ծախսերի մեթոդը չի գնահատել:

¹² Պրոբիտ մոդելում վերջնարդյունքը բինար է (0 կամ 1)՝ այս դեպքում արդյոք ընկերությունը ստուգվել է, թե՞ ոչ:

¹³ ՊԵԿ-ը հասանելիություն է տրամադրել հանրագումարի բերված ռիսկի հինգ միավորների և ռիսկերի դասակարգումների (այսինքն՝ ըստ ռիսկայնության բարձրից ցածր դասակարգված հարկ վճարողների) ԵՀ, ՇՀ և ԱԱՀ-ի համար 2019-2023 եկամտային տարիների համար: Թեև ՊԵԿ-ը տրամադրել է ռիսկի միավորներին հասանելիություն, սակայն այս միավորների հիմքում ընկած մանրամասները չեն տրամադրվել: Դրանց հիմքում ընկած մանրամասները չեն բացահայտվում՝ ստուգուման համար ընտրվելուց հարկ վճարողների խուսափելը կանխելու համար: Սակայն ռիսկային միավորները բավարար են Հեքմանի մոդելի աշխատանքի համար:

10. ԵՀ/ՄԱՎ ճեղքերի գնահատմանը Հեքմանի երկքայլ գնահատման մոդելի համապատասխանությունը կախված է ստուգման գործելակերպից: Նեղ ուղղվածությամբ ստուգումներից հնարավոր է վրիպեն չհայտարարագրված հարկերը՝ հանգեցնելով ԵՀ/ՄԱՎ ճեղքի թերագնահատման: Երբ ստուգումների թիրախում որոշակի ոլորտներ կամ ընկերությունների տեսակներ են, հուսալի գնահատականների ստացումը դժվարանում է՝ էքստրապոլյացիայի ավելացման պատճառով: Բացի այդ, ստուգողների կողմից կարող է որոշ կարգազանցություն չհայտնաբերվել՝ ԵՀ/ՄԱՎ ճեղքի հնարավոր թերագնահատմամբ:

11. ՊԵԿ-ը հարկային գործակալների համալիր ստուգումներ է անցկացրել՝ Հեքմանի մոդելի ընտրությունը դարձնելով նպատակահարմար: Համալիր ստուգումները, ինչպես նաև ՊԵԿ-ում առկա մանրակրկիտ տվյալները, ամուր հիմք են ապահովում ԵՀ/ՄԱՎ ճեղքի չափորոշման նպատակով Հեքմանի մոդելի կիրառման համար:


12. Գործառնական ստուգումների հիման վրա գնահատվել են չորս անընդմեջ տարիների ԵՀ/ՄԱՎ ճեղքերը: Այս գնահատականներն ընդգրկում են 2020, 2021, 2022 և 2023 եկամտային տարիների համար առկա ամենավերջին տվյալները: 2023 թ. ստուգումների վրա հիմնված գնահատականներն ավելի անորոշ են՝ պայմանավորված ստուգումների ավելի փոքր թվով, մասամբ էլ այն հանգամանքով, որ ՊԵԿ-ը դեռևս ստուգում է 2023 թ. հաշվարկները:

II. Հիմնական եզրահանգումներ

A. ԵՀ ճեղքի արդյունքներ

13. 2020-2023 թթ.-ին ԵՀ միջին տարեկան ճեղքը գնահատվում է 14.5 միլիարդ ՀՀ դրամ¹⁴ կամ պոտենցիալ ԵՀ պարտավորության 3.8 տոկոսը (գծապատկեր 1): ԵՀ ճեղքը համապատասխանում է 2020-2023 թթ. միջին ՀՆԱ-ի 0.2 տոկոսին: ԵՀ ճեղքի գնահատականները հիմնված են Հեքմանի մոդելի վրա՝ օգտվելով 2020, 2021, 2022 և 2023 եկամտային տարիներին անցկացված գործառնական ստուգումներից: Հեքմանի մոդելով գնահատման համար օգտագործվել են ՊԵԿ-ի կողմից չորս տարվա ժամանակահատվածում անցկացված՝ ընդհանուր թվով 4,098 համալիր ստուգումները, որոնք անդրադառնում են ընկերությունների բոլոր կողմերին: Արդյունքները ճշտվել են՝ գործառնական ստուգումների ոչ պատահական ընտրությունը հաշվի առնելու, «ընտրանքի ընտրության կողմնակալություն» կոչվող երևույթին անդրադառնալու համար:

Գծապատկեր 1. ԵՀ գնահատված ճեղքը (2020-2023)



Աղբյուրը՝ ԱՄՀ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

14. 2023 թ. ԵՀ ճեղքը գնահատվում է 24.1 միլիարդ ՀՀ դրամ¹⁵ կամ պոտենցիալ ԵՀ պարտավորության 5.5 տոկոսը (գծապատկեր 1): ԵՀ ճեղքը համապատասխանում է 2023 թ. ՀՆԱ-ի 0.3 տոկոսին:

¹⁴ Չափորոշվել է 2020 թ.-ի գներով:

¹⁵ Չափորոշվել է 2020 թ.-ի գներով:

15. 2020 թ.-ին ԵՀ ճեղքը կազմել է 8.9 միլիարդ ՀՀ դրամ կամ պոտենցիալ ԵՀ պարտավորության 2.6 տոկոսը: 2021 թ. ԵՀ ճեղքը 10.8 միլիարդ ՀՀ դրամ էր կամ պոտենցիալ ԵՀ պարտավորության 3.1 տոկոսը և 2022 թ.-ին ԵՀ ճեղքը 14.4 միլիարդ ՀՀ դրամ էր կամ պոտենցիալ ԵՀ-ի 3.8 տոկոսը: ԵՀ ճեղքը 2020 -ից 2023 թթ.-ն ավելացել է, սակայն ՇՀ ճեղքի համեմատ հարաբերականորեն ցածր է մնում :¹⁶


16. Հարաբերական և բացարձակ ճեղքի մեծացումը պայմանավորված է նորաստեղծ ընկերությունների թվի աճով, որոնց ԵՀ ճեղքը հարաբերականորեն բարձր է ավելի հին ընկերությունների համեմատ (տե՛ս Գծապատկեր 4-ը): 2020 -ից 2023 թթ.-ին ԵՀ պարտավորությամբ ընկերությունների թիվն աճել է՝ 65,193-ից կազմելով 87,854: Մինչև հինգ տարեկան ընկերությունների ԵՀ ճեղքը 1.6 միլիարդ ՀՀ դրամ էր (պոտենցիալ ԵՀ-ի 3.3 տոկոսը) 2020 թ.-ին և 12.6 միլիարդ ՀՀ դրամ (պոտենցիալ ԵՀ-ի 13.2 տոկոսը) 2023 թ.-ին: Սա ցույց է տալիս, որ այս ժամանակահատվածում ԵՀ ճեղքի 15.2 միլիարդ ՀՀ դրամ աճին նորաստեղծ ընկերությունները նպաստել են 11 միլիարդ ՀՀ դրամով, որին բաժին է ընկել ընդհանուր աճի 72%-ը:

17. ԵՀ ճեղքը ընդհանուր ԵՀ նկատմամբ տոկոսային արտահայտությամբ ամենաբարձրը «Մեծածախ» ոլորտում է (Գծապատկեր 2):¹⁷ Ինչպես երևում է Գծապատկեր 2-ում, հարաբերականորեն բարձր երկրորդ ԵՀ ճեղքը «Կացություն» ոլորտում է: ԵՀ ամենացածր հարաբերական ճեղքը 10 գլխավոր ոլորտներից հանդիպում է «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» ոլորտում:

¹⁶Հայաստանում ՇՀ միջին ճեղքը 2020-2022 թթ.-ին գնահատվել է պոտենցիալ ՇՀ պարտավորության 26.4-35.2 տոկոսի չափով՝ https://www.elibrary.imf.org/view/journals/019/2024/076/019_2024_issue-076-en.xml

¹⁷ Ոլորտային դասակարգումը հետևում է S9S7 ծածկագրերին (Nomenclature statistique des Activites Economiques'-Եվրոպական Համայնքում տնտեսական գործունեության տեսակների վիճակագրական դասակարգիչ)

Գծապատկեր 2. ԵՆ ճեղքը ընդհանուր ԵՆ նկատմամբ տոկոսով՝ ըստ 10 գլխավոր ոլորտների¹⁸ (2020-2023 թթ. միջին)



Աղբյուրը՝ ԱՄՆ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

18. Մի քանի աշխատող ունեցող կազմակերպություններում ԵՆ ճեղքը մեծ է (Գծապատկեր 3): Այն կազմում է 0–5 աշխատող ունեցող կազմակերպությունների պոտենցիալ հարկի 31.98 տոկոսը: ԵՆ ճեղքը նվազում է աշխատողների թվի ավելացմանը զուգընթաց և 100-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների դեպքում կազմում է 0.25 տոկոս: Սա ցույց է տալիս, որ ավելի փոքր կազմակերպություններում աշխատողների և գործատուների միջև գաղտնի համաձայնությունն ավելի տարածված է, մինչդեռ խոշոր կազմակերպություններում այն նվազ խնդրահարույց է: Նմանատիպ օրինաչափություններ են դիտվում Նորվեգիայում:¹⁹ Կլևենը և այլք (Kleven et al) (2016) տեսական աշխատության մեջ փաստարկում են, որ գաղտնի համաձայնությամբ հարկերի վճարումից խուսափումը շատ բարդ է խոշոր ընկերություններում:²⁰

19. ԵՆ ճեղքն ավելի մեծ է ավելի երիտասարդ կազմակերպություններում (Գծապատկեր 4): Այն կազմում է 0-2 տարեկան կազմակերպությունների պոտենցիալ հարկի 13.96 տոկոսը, իսկ 20-ից ավելի տարվա պատմությամբ կազմակերպություններում 2.34 տոկոս է:


¹⁸ Այս ոլորտը կազմակերպության համար համարվում է առաջնային, եթե մեկից ավելի ոլորտում են գործունեություն իրականացնում: Ոլորտային ծածկագրերը կազմակերպություններն են հայտարարագրում: Գծապատկերում տարածքի սահմանափակության պատճառով ցույց են տրվում միայն գլխավոր 10 ոլորտները:

¹⁹ Marie Bjørneby, Annette Alstadsæter, Kjetil Telle (2018) “Collusive Tax Evasion by Employers and Employees: Evidence from a Randomized Field Experiment in Norway”. CESifo Working Paper No. 7381.

²⁰ Henrik Jacobsen Kleven, Claus Thustrup Kreiner, Emmanuel Saez (2016) “Why Can Modern Governments Tax So Much? An Agency Model of Firms as Fiscal Intermediaries”. *Economica* (2016) 83, 219–246.


20. Կարևոր է կարգազանցության պատճառների ավելի ուշադիր ուսումնասիրությունը բարձր ռիսկային այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, շինարարությունը և փոխադրումների ոլորտները և փոքրաթիվ աշխատողներ ունեցող կազմակերպությունները: Ասվածն արժեքավոր տեղեկություններ կտա կարգապահության բարելավման ծրագրի համար՝ հասկանալու, թե կարգազանցությունը պայմանավորված է հարկերի վճարումից միտումնավոր խուսափելով, հարկային օրենսդրության մասին գիտելիքի պակասով, թե՞ խրթին օրենսդրությամբ:

Գծապատկեր 3. ԵՆ հարաբերական ճեղքն՝ ըստ չափի (2020-2023 թթ. միջին)



Աղբյուրը՝ ԱՄՆ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

Գծապատկեր 4. ԵՆ հարաբերական ճեղքն՝ ըստ տարիների թվի (2020-2023 թթ. միջին)




Աղբյուրը՝ ԱՄՆ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

21. Կիրառելով Հեքմանի մոդելը, որը բացատրում է ամենախոշոր կազմակերպություններին, ԵՀ ճեղքը 2023 թ.-ին գնահատվում է 12.8 միլիարդ ՀՀ դրամի կամ պոտենցիալ ԵՀ-ի 4.1 տոկոսի չափով (Գծապատկեր 5): ԵՀ գնահատված ճեղքը համապատասխանում է 2023 թ. ՀՆԱ-ի 0.2 տոկոսին: ²¹

22. Խոշորագույն կազմակերպությունները չներառելով հավանական է, որ ԵՀ ճեղքի ավելի հավաստի գնահատական ստացվում: Հաշվի առնելով խոշոր ընկերությունների սահմանափակ թիվը, համապատասխան հարկային ճեղքն ավելի մեծ անորոշություն է ենթադրում: Այս ընկերությունները բացառելով՝ կարելի է նվազեցնել «աղմուկը» և հարկային ճեղքի ավելի ճշգրիտ գնահատական ստանալ, սակայն դրա գինը պոպուլյացիայի փոքրացումն է, որի համար գնահատվում է հարկային ճեղքը:²² Արտառոց դեպքերի ազդեցությունը հավասարակշռելու և տակավին պոպուլյացիան հիմնականում հաշվի առնելու համար, խոշորագույն կազմակերպությունների ամենաբարձր 0.1 տոկոսը, չափված աշխատողների միջին թվով, բացառվել է Հեքմանի մոդելով գնահատում և կանխատեսում անելուց առաջ: Խոշոր կազմակերպությունները բացառելուց հետո մնում է նմանատիպ ԵՀ ճեղք:

Գծապատկեր 5. ԵՀ ճեղք. խոշոր կազմակերպությունների բացառումը (2020-2023)



Աղբյուրը՝ ԱՄՆ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

²¹ Չափորոշվել է 2020 թ. գներով:

²² Ներքին եկամուտների ծառայության (IRS) ՇՀ ճեղքի մեթոդաբանությամբ խոշոր բիզնեսները բացառվում են Հեքմանի մեթոդաբանության շրջանակից:

B. ՄԱՎ ճեղքի արդյունքները


23. Միջին տարեկան ՄԱՎ ճեղքը 2020-2023 թթ-ին գնահատվում է 0.6 միլիարդ ՀՀ դրամ ²³ կամ պոտենցիալ ՄԱՎ պարտավորության 1.6 տոկոսը: ²⁴ ՄԱՎ ճեղքը համապատասխանում է 2020-2023 թթ. միջին ՀՆԱ-ի 0.0 տոկոսին:

24. 2023 թ. ՄԱՎ ճեղքը գնահատվում է 1 միլիարդ ՀՀ դրամ կամ պոտենցիալ ԵՀ պարտավորության 1.8 տոկոսը (Գծապատկեր 6): ՄԱՀ ճեղքը համապատասխանում է 2023 թ. ՀՆԱ-ի 0.0 տոկոսին: ՄԱՀ ճեղքի գնահատականները ևս հիմնված են Հեքմանի մոդելի վրա՝ օգտագործելով 2020, 2021, 2022 և 2023 եկամտային տարիների համար անցկացված գործառնական ստուգումները:

25. 2020 թ.-ին ՄԱՎ-ը կազմել է 0.5 միլիարդ ՀՀ դրամ կամ պոտենցիալ ՄԱՎ պարտավորության 2.8 տոկոսը (Գծապատկեր 6): 2021 թ.-ին ՄԱՎ ճեղքը կազմել է 0.5 միլիարդ ՀՀ դրամ կամ պոտենցիալ ԵՀ-ի 1.5 տոկոսը, իսկ 2022 թ. ՄԱՎ ճեղքը կազմել է 0.3 միլիարդ ՀՀ դրամ կամ պոտենցիալ ՄԱՎ-ի 0.7 տոկոսը:

26. ՄԱՎ ճեղքը ցույց է տալիս, որ սոցիալական ապահովության վճարները կարգապահության առումով էական խնդիր չեն: ՄԱՎ ճեղքը ամբողջ ժամանակահատվածի ընթացքում մշտապես ցածր է մնում :

Գծապատկեր 6. ՄԱՎ ճեղքը (2020-2023)




Աղբյուրը՝ ԱՄՀ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

²³ Չափորոշվել է 2020 թ-ի գներով:

²⁴ ՄԱՎ ճեղքի գնահատականներն ավելի մեծ անորոշության հետ են կապված, քանի որ զգալիորեն ավելի փոքրաթիվ ընկերությունների մոտ են սխալներ հայտնաբերվել ՄԱՎ -ի հսկողության ժամանակ՝ ԵՀ-ի համեմատ:

27. Կիրառելով Հեքմանի մոդելը, որով բացատրվում են խոշոր ընկերությունները, ՍԱՎ ճեղքը 2023 թ.-ին գնահատվում է 0.3 միլիարդ ՀՀ դրամ և պոտենցիալ ԵՀ-ի 0.5 տոկոսը (Գծապատկեր 7): ՍԱՎ գնահատված ճեղքը համապատասխանում է 2023 թ. ՀՆԱ-ի 0.0 տոկոսին:

Գծապատկեր 7. ՍԱՎ ճեղք. Խոշոր կազմակերպությունների բացառումը (2020-2023)



Աղբյուրը՝ ԱՄՆ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

III. Հաջորդ քայլեր

A. Ստեղծել տվյալների վերլուծաբանների թիմ և կիրառել մշակված մոդելը

28. ԱՄՆ նախարարը՝ 2024 թ. մարտի 22 ճեղքի չափորոշման առաքելության հիման վրա ՊԵԿ-ին առաջարկվել էր հարկային ճեղքի ապագա գնահատումներ կազմելու պատասխանատվությամբ 2-3 տվյալների վերլուծաբան նշանակել: ՇՀ/ԵՀ/ՍԱՎ ճեղքի մոդելները պահպանելու համար վճարող է ՊԵԿ-ի կողմից տվյալների անալիտիկայի ուղղությամբ ներդրումը: Առաջարկվել էր առնվազն 2-3 հոգի վերապատրաստել տվյալների անալիտիկայի ուղղությամբ: Ասվածը ՊԵԿ-ին տարբեր հարկերի մասով հարկային ճեղքի ինքնուրույն վերլուծություն անելու հնարավորություն կտա՝ հիմնվելով ԱՄՆ առաքելությունների կողմից 2024 թ.-ին մշակված գործառնական ստուգումների վրա:

29. Առաջարկվել էր նաև, որ նշանակված թիմն իր ժամանակի մոտավորապես 80 տոկոսն ուղղի տվյալների անալիտիկային: Կարևոր է բավարար ժամանակ հատկացնելը, ինչը տվյալների լավ անալիտիկա կատարելու հնարավորություն կտա: Հարկ է, որ թիմը յուրացնի ծրագրավորման անհրաժեշտ գործիքները, որպեսզի ի վիճակի լինի կատարելու հարկային ճեղքի վերլուծություն:

30. ՊԵԿ-ը ԵՀ/ՍԱՎ ճեղքերին անդրադառնում է ֆիզիկական անձանց եկամտային հարկի հայտարարագրման գործընթացում: Վճարող է գործատուներից որակյալ տվյալների ստացումը, հատկապես, եթե դրանք նախալրացված են ֆիզիկական անձանց հարկերի հայտարարագրում: Սույն զեկույցում բացահայտված հարկային ճեղքերի խնդրի հաղթահարումը կբարձրացնի ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրերի տվյալների որակը:

B. Առաջարկություն

31. Եթե վերևում առաջարկված քայլերը ձեռնարկելուց հետո ՊԵԿ-ը չկարողանա սեփական ռեսուրսներով գնահատում իրականացնել 2025 թ.-ին, երբ համապատասխան տվյալներն առկա լինեն, կարող են դիմել ԱՄՆ-ին աջակցության խնդրանքով՝ ՇՀ/ԵՀ/ՍԱՎ ճեղքերի ինքնագնահատմանն օգնելու համար: Այս մոտեցումը ՊԵԿ-ին կօգնի զարգացնել տվյալների վերլուծության անհրաժեշտ հմտություններ՝ ապագայում մոդելը կիրառելու և ինքնաբավ դառնալու համար:

Հավելված I. Լրացուցիչ նյութ

Ռիսկայնության վրա հիմնված, պատահականության սկզբունքով չընտրված ստուգումներից ստացված հարկային ճեղքի գնահատականները ընտրանքի ընտրության կողմնակալության հակվածություն ունեն` պայմանավորված ընտրության գործընթացի վրա կարգազանցության ընկալվող ռիսկի ազդեցությամբ: Այլ կերպ ասած` ստուգված ընկերությունները չեն ներկայացնում ընկերությունների ընդհանուր պոպուլյացիան, քանի որ ընտրվում են որպես հարկային կարգազանցության ռիսկի ավելի հակված` հիմնվելով որոշ ցուցանիշների վրա: Ուստի, բացառապես այսպիսի ռիսկի վրա հիմնված գործառնական ստուգումների հիման վրա արված հարկային ճեղքի գնահատականը չի արտացոլում ընդհանուր պոպուլյացիայի ցուցանիշը: Նշվածը հաշվի առնելու ընդհանուր մոտեցումը Հեքմանի 2-քայլ գնահատման գործիքի միջոցով է:²⁵ Հեքմանի 2-քայլ գնահատման գործիքը նույն մոդելում հաշվի է առնում ընտրանքի ընտրության կողմնակալությունը` գնահատելով ինչպես ընտրության գործընթացը, այնպես էլ կարգազանցության մակարդակը (այսինքն` ստուգմամբ հայտնաբերված հարկը): Հետևելով Ուլդրիջին (2010)²⁶ Հեքմանի 2-քայլ գնահատման գործիքի արժեքը ստացվում է վերնարդյունքի հավասարմամբ և ընտրության հավասարմամբ.

$$Y_i = X_i\beta + u_i \quad (1)$$

$$S_i = 1[Z_i\delta + v_i > 0] \quad (2)$$

Դիցուք (1) հավասարումը վերջնարդյունքի հավասարումն է, որտեղ Y_i -ը չափում է ստուգմամբ հայտնաբերված հարկը, իսկ X_i -ը` ընկերության բնութագրիչներն են (այսինքն` ՇՀ հաշվարկի տողերը, ոլորտը, աշխատողների թիվը և այլն)²⁷: Հաջորդ (2) հավասարումն ընտրության հավասարումն է, որտեղ S_i ը ստուգման ցուցանիշն է, ընդ որում $S_i = 1$ ցույց է տալիս, որ i ընկերությունը ստուգվել է, իսկ $S_i = 0$ ցույց է տալիս, որ i ընկերությունը` ոչ, իսկ Z_i -ը գործոններն են, որոնցով որոշվում է, թե ընկերությունը ստուգվում է, թե` ոչ:²⁸ Սա ներառում է ռիսկի հանրագումարի բերված 30 միավորներ և ռիսկի դասակարգումներ, որոնք ՊԵԿ-ի կողմից օգտագործվում են ստուգումների նպատակադրման համար:²⁹ Կարևոր է, որ Y_i -ի արժեքը դիտվում է միայն ստուգման

²⁵ James J. Heckman (1979). Sample Selection Bias as a Specification Error. *Econometrica*. vol. 47(1), pp. 153-161.

²⁶ Jeffrey M. Wooldridge (2010). *Econometric Analysis of Cross Section and Panel Data*. The MIT Press

²⁷ Օգտագործվում է ընդհանուր թվով 12 փոփոխական: Այս փոփոխականները համապատասխանում են 12 փոփոխականներին, որոնք որպես ամենակարևոր փոփոխականներ են ընտրվել «LASSO» մոդելում, որը մշակվել է ստուգման ճշտումները կանխատեսելու համար: Բացի այդ, ներառված են ԵՀ ռիսկի միավորները և ԵՀ ռիսկի դասակարգումները:

²⁸ ԵՀ՝ ՄԱՎ ճեղքի գնահատման տվյալները բխում են ՇՀ հաշվարկներից:

²⁹ Ընտրության մոդելում օգտագործվում են ընդհանուր հինգ հանրագումարի բերված ռիսկի միավորներ և ռիսկի դասակարգումներ (այսինքն` ռիսկի հիման վրա բարձրից ցածր դասակարգված հարկ վճարողներ) և 2019-2023 եկամտային տարիների ԵՀ, ՇՀ և ԱԱՀ-ն :

համար i ընկերության ընտրված լինելու դեպքում ($S_i = 1$): Ի վերջո, u_i - ը և v_i - ը անկախ են X_i -ից և Z_i -ից, ընդ որում $v_i \sim N(0,1)$ և $E(u_i|v_i) = \gamma v_i$.³⁰

Մենք հետաքրքրված ենք $E[Y_i|X_i]$ -ի գնահատմամբ: Սակայն քանի որ Y_i դիտվում է միայն, երբ $S_i = 1$, մենք կարող են գնահատել $E[Y_i|X_i, S_i = 1]$: (1) և (2) հավասարումը կիրառելով՝ սա կարելի է վերաշարադրել այսպես.

$$E[Y_i|X_i, S_i = 1] = X_i\beta + E[u_i|v_i > -Z_i\delta] = X_i\beta + \gamma\lambda(Z_i\delta) \quad (3)$$

Դիցուք $\lambda(\cdot) = \phi(\cdot)/\Phi(\cdot)$, որտեղ $\phi(\cdot)$ - ը և $\Phi(\cdot)$ - ը համապատասխանաբար ստանդարտ նորմալ բաշխման հավանականության խտության ֆունկցիան (pdf) և աճողական բաշխման ֆունկցիան են (cdf): $\lambda(\cdot)$ -ի ձևը բխում է այն ենթադրությունից, որ $v_i \sim N(0,1)$ և այն որակվում է որպես Միլսի հակադարձ հարաբերակցություն: (3) հավասարմամբ ներկայացվում է β -ը հետևողականորեն գնահատելու եղանակը: Հեքմանին (1979) հետևելով՝ մենք կարող ենք հետևողականորեն գնահատել β -ն և γ -ը՝ Y_i -ի փոքրագույն քառակուսիների մեթոդով (OLS) կատարելով X_i և $\lambda(Z_i\delta)$ - ի ռեգրեսիոն վերլուծություն, որտեղ δ - ը ստացվում է (2) հավասարումը հաշվարկելով պրոբիտ (probit) մոդելի կիրառմամբ: β - ի գնահատականը ստանալով, օգտվելով Հեքմանի 2-քայլ գնահատման գործիքից, այն կարող է օգտագործվել կարգազանցության ոչ պայմանական սպասմամբ գնահատման մոդել կառուցելու համար ($S_i = 1$ -ով չպայմանավորված), որը տրված է $E[\widehat{Y}_i|\widehat{X}_i] = X_i\hat{\beta}$ -ով:³¹ Սա կարելի է կիրառել՝ ստանալու պոպուլյացիայի բոլոր ընկերությունների կարգազանցության կանխատեսվող արժեքները և հետևաբար՝ ընդհանուր ԵՀ/ՄԱԿ ճեղքը: Աղյուսակ A2 -ում ներկայացվում է ընտրության և վերջնարդյունքի մոդելների գնահատականը՝ օգտվելով 2020, 2021, 2022 և 2023 թթ.-ի ՇՀ հաշվարկների և գործառնական ստուգումների բոլոր տվյալներից: Ընտրության մոդելով ստացվում 0.77-ի հավասար R^2 , որը ցույց է տալիս, որ ընտրության մոդելը տվյալներին լավ է համապատասխանում:³² Անդրադառնալով վերջնարդյունքի մոդելին նշենք, որ դրանով ստացվում է 0.03-ի հավասար R^2 : Իդեալական տարբերակով, մենք նպատակն է, որ այս արժեքը հնարավորինս բարձր լինի: Սակայն, ընկերությունների զգալի բազմազանության և ստուգմամբ առաջադրված ճշտումներով պայմանավորված՝ այս նպատակին հասնելը դժվար է: Հետաքրքրական է, որ Միլսի հակադարձ հարաբերակցության գործակիցը նշանակալի չէ (Աղյուսակ Ա2-ում՝ IMR-ը), ինչը վկայում է ընտրանքի ընտրության մեջ սահմանափակ կողմնակալության մասին:

Անհրաժեշտ է երկու կարևոր կետ ընդգծել: Առաջին՝ կարգազանցության կանխատեսման համար Հեքմանի 2-քայլ գնահատման գործիքի կիրառման ժամանակ, պատճառահետևանքային հարաբերությունների դուրսբերման փոխարեն, կանխատեսումների ճշտությունը կախված է նրանից, թե ընտրության մոդելը և վերջնարդյունքի մոդելը որքանով են տվյալները լավ բացատրում: Երկրորդ՝

³⁰ Մենք միայն պահանջում ենք, որ v_i - ը նորմալ բաշխվածություն ունենա: Բավարար է ենթադրելը, որ u_i - ի պայմանական սպասումը, քանի որ v_i - ը զճային է, ինչը չի պահանջում, որ u_i - ը նորմալ բաշխվածություն ունենա:

³¹ Ստանդարտ սխալները Հեքմանի 2-քայլ գնահատման գործիքի միջոցով ոչ ավտոմատ գնահատելիս ճիշտ չեն: Ստանդարտ սխալները կարելի ստանալ բուքստրափ (bootstrap) կիրառելով:

³² Սա Մրքֆադենի (McFadden) ռեգրեսիայի կեղծ գործակիցն է՝ R^2

լավագույն տարբերակը երկու մոդելում նույն փոփոխականների օգտագործումից խուսափելն է: Մա
անելու պատճառով վերջնարդյունքի մոդելի նույնականացումը հիմնվում է Միլսի հակադարձ
հարաբերակցության ոչ գծային լինելու վրա, ինչն էլ կարող է բարձր բազմահամագծի (multicollinearity)
հետևանքով անկայուն արդյունքների պատճառ դառնալ: Դա թույլ չտալու համար, ընտրության
մոդելը պետք է ներառի առնվազն մեկ փոփոխական, որով որոշվում է, թե ընկերությունը ստուգման
ենթարկվում է, սակայն չի ազդում կարգազանցության մակարդակների վրա (հայտնի է նաև որպես
բացառման սահմանափակում):³³ Սակայն նման փոփոխական գտնելը կարող է բարդ լինել, եթե
ստուգումները բացառապես հիմնված են գնահատվող կարգազանցության վրա: Այս համատեքստում
մենք կարող ենք օգտագործել ԱԱՀ-ի և ՇՀ-ի ռիսկի հանրագումարի բերված 10 միավորները և 10 ռիսկի
դասակարգումները՝ որպես բացառման սահմանափակումներ: Այլ կերպ ասած՝ դրանք օգտագործվում
են ընկերությունը ստուգում անցնելը կանխատեսելու, սակայն չեն օգտագործվում երկրորդ քայլում
ստուգմամբ հայտաբերված ԵՀ-ն կանխատեսելու համար:

³³ Այլ կերպ ասած՝ բացառման սահմանափակում նշանակում է, որ առնվազն մեկ փոփոխական կա, որը ընտրության
հավասարման մեջ ոչ զրոյական գործակցով է հայտնվում է, բայց դա հետաքրքող հավասարումը չէ:

Աղյուսակ 2. Ռեգրեսիայի արդյունքները

Ընտրության մոդել			Վերջնարդյունքի մոդել		
Փոփոխականներ	Գործակիցներ	Ստան. սխալ	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստան. սխալ
Ազատ անդամ	-1.696***	0.029	Ազատ անդամ	159721.456	182885.606
ԵՀ միավոր 2019	0.002***	0.000	UnjustPayTotalAmountIncomeSum	-0.061	0.058
ԵՀ միավոր 2020	0.000	0.000	RentalTotalAmountIncomeSum	-0.002	0.039
ԵՀ միավոր 2021	0.002***	0.000	PropertyTotalAmountIncomeSum	0.003*	0.002
ԵՀ միավոր 2022	-0.002***	0.000	UnjustPayIncomeTaxAmountSum	0.532	0.397
ԵՀ միավոր 2023	-0.002***	0.000	PercentIncomeTaxAmountSum	0.003	0.002
ԵՀ դասակարգում 2019	-0.096***	0.007	EmployeesAvg	79.889	278.843
ԵՀ դասակարգում 2020	0.000***	0.000	Age	13124.904**	5834.049
ԵՀ դասակարգում 2021	0.000***	0.000	InsuranceTotalAmountIncomeSum	-0.013	0.009
ԵՀ դասակարգում 2022	0.000***	0.000	OthertaxbaseSum	-0.012***	0.002
ԵՀ դասակարգում 2023	0.001***	0.000	RentalIncomeTaxAmountSum	0.037	0.396
ՇՀ միավոր 2019	0.000	0.000	UnjustPayNoRecipientsIncomeSum	-13.217	4.529
ՇՀ միավոր 2020	0.001***	0.000	HoursworkedSum	0.160	0.184
ՇՀ միավոր 2021	0.001***	0.000	ԵՀ միավոր 2019	-508.051*	290.910
ՇՀ միավոր 2022	0.000***	0.000	ԵՀ միավոր 2020	-8.770	348.234
ՇՀ միավոր 2023	0.023***	0.000	ԵՀ միավոր 2021	-25.695	425.310
ՇՀ դասակարգում 2019	0.000***	0.000	ԵՀ միավոր 2022	16.391	278.431
ՇՀ դասակարգում 2020	0.000*	0.000	ԵՀ միավոր 2023	-504.825	816.632
ՇՀ դասակարգում 2021	0.000***	0.000	ԵՀ դասակարգում 2020	-3.534***	0.948
ՇՀ դասակարգում 2022	0.000***	0.000	ԵՀ դասակարգում 2021	-1.658*	0.899
ՇՀ դասակարգում 2023	-0.020***	0.001	ԵՀ դասակարգում 2022	-4.864***	1.380
ԱԱՀ միավոր 2019	0.003***	0.001	ԵՀ դասակարգում 2023	1476.673	972.816
ԱԱՀ միավոր 2020	0.000	0.000	IMR	-126813.376*	70104.080
ԱԱՀ միավոր 2021	0.002***	0.000			
ԱԱՀ միավոր 2022	0.003***	0.000			
ԱԱՀ միավոր 2023	0.001	0.000			
ԱԱՀ դասակարգում 2019	-0.258***	0.028			
ԱԱՀ դասակարգում 2020	0.000***	0.000			
ԱԱՀ դասակարգում 2021	0.000***	0.000			
ԱԱՀ դասակարգում 2022	0.000***	0.000			
ԱԱՀ դասակարգում 2023	-0.001***	0.000			
Ներառում է ոլորտային կեղծ փոփոխականներ	Ոչ			Այո	
Դիտարկումների թիվը	306,666			9,532	
R²	0.77			0.03	

Աղբյուրը՝ ԱՄՀ հաշվարկները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա; Ծանոթ. ¹⁾ 2020 թ. գներով: Վերստուգումները հանվել են: Միայն ԵՀ հաշվարկ ներկայացրած կազմակերպություններն են: Վերջնարդյունքի մոդելը ներառում է նաև ոլորտային կեղծ փոփոխականներ: Ստանդարտ սխալները հաշվարկված են բուտստրափի (bootstrap) կիրառմամբ՝ վերընտրանքը կատարվել է ՀՎՀՀ-ի մակարդակով: Ընտրության մոդելում R²-ը համապատասխանում է Մրքֆադենի կեղծ R²-ին ***, **, * նշանակում է p < 0.01, p < 0.05, p < 0.10:

Հավելված II. ԵՀ ճեղքի գնահատման այլ մեթոդներ

ԱՄՇ-ի՝ Թաքրեյ և այլոց հեղինակած (Thackray et al) (2021) «Եկամտային վարչարարության ճեղքի վերլուծության ծրագիր. Ֆիզիկական անձանց եկամտային հարկի ճեղքի գնահատման վերլուծական շրջանակ» խորագրով (2021) Տեխնիկական ծանոթագրություններում և ձեռնարկներում թվարկում են մի շարք մեթոդներ, որոնք կարելի է օգտագործել ԵՀ ճեղքի գնահատման համար:³⁴ Այդ մեթոդներից որոշները ավելի լավ են համապատասխանում չգրանցված հարկ վճարողների արտացոլմանը, քան մյուսները: ԵՀ/ՄԱՎ ճեղքերի չափորոշման համար մատչելի տարբեր մեթոդներից որոշները ներկայացվել են նաև 2024 թ. շրջանակի որոշման առաքելության ժամանակ, որի ընթացքում ուսումնասիրվում էր ԵՀ/ՄԱՎ ճեղքերի չափորոշման իրագործելիությունը:

Որպես կանոն գրականության մեջ, այդ թվում՝ Թաքրեյ և այլք (2021), տարբերակվում են ուղղակի և անուղղակի մեթոդները: Մեթոդների նկարագրության մյուս եղանակը «վերնից ներքև» կամ «ներքնից վերև» մոտեցումների միջոցով է: ԵՀ ճեղքի չափորոշման ուղղակի մեթոդները հիմնված են անձանց և/կամ ընկերությունների հետ առնչության կամ դիտարկման վրա: Ուղղակի մեթոդները սովորաբար կարելի է նկարագրել որպես «ներքնից վերև» մեթոդներ: Ուղղակի մեթոդներն են՝ «պատահական ստուգումները», «ռիսկի վրա հիմնված ստուգումները» և «հարցաթերթային հարցումները»:³⁵ Անուղղակի մեթոդների կիրառմամբ վերլուծաբանները փորձում են չափել «հետքերը», որոնք չգրանցված հարկ վճարողները, այսպես ասած՝ թողնում են տարբեր վիճակագրական տվյալներում: Անուղղակի մեթոդները կարելի է որպես «վերնից ներքև» մեթոդներ նկարագրել: Անուղղակի միջոցները ներառում են «սպառման եկամտի մեթոդը», որը մշակվել է Պիսարիդեսի և Վեբերի կողմից (1989), «աշխատանքային ծախսերի մեթոդը» և «ազգային հաշիվների անհամապատասխանությունները»: Մտորև այդ մեթոդները փոքր-ինչ ավելի մանրամասն են նկարագրվում:

Պատահական ստուգումներ

Պատահականության սկզբունքով ընտրանքի կազմման մեթոդն օգտագործվում է ստուգման համար հարկ վճարողների ընտրության համար, որտեղ պոպուլյացիայի յուրաքանչյուր անդամ ունի ստուգման ենթարկվելու հավանականություն: Այս մոտեցումն ապահովում է ողջ պոպուլյացիայի համար ներկայացուցչական ընտրանք: Ընտրված ընտրանքը մանրակրկիտ ստուգվում է, և ստուգողները գրանցում են կատարված ճշտումները: Այնուհետև այդ ճշտումները մասշտաբայնացվում են պոպուլյացիայի նկատմամբ ընտրանքի հարաբերակցությամբ՝ հարկային կարգապահության ճեղքը գնահատելու համար:

³⁴ Mick Thackray, Sarah Jennings, and Martin B. Knudsen (2021): *The Revenue Administration Gap Analysis Program. An Analytical Framework for Personal Income Tax Gap Estimation*. TNM/2021/009.

³⁵ Սույն գեկույցում ԵՀ ճեղքի չափորոշման համար օգտագործվում են ռիսկի վրա հիմնված ստուգումները, ուստի դրանք այստեղ լրացուցիչ չեն քննարկվի:

Հարցաթերթային հարցումներ

Հարցաթերթային հարցումներում ռեսպոնդենտներին ուղղակի հարց է տրվում, թե նրանք ստվերային կամ ընդհատակյա տնտեսությունում գործունեություն իրականացրե՞լ են տվյալ ժամանակահատվածում կամ նրանց անուղղակի հարց է տրվում, թե՝ «ճանաչո՞ւմ են ինչ-որ մեկին, ով ստվերային կամ ընդհատակյա տնտեսությունում գործունեություն է իրականացրել»:³⁶ Այս մեթոդը հատկապես օգտագործվել է Սկանդինավիայում, տե՛ս Պեդերսեն (2003):³⁷

Սպառման եկամտի մեթոդ

Սպառողների հարցումների միջոցով հնարավոր է անձի եկամուտներն ու ծախսերը համեմատել որոշակի ժամանակահատվածում: Այս հարցումները մանրամասն տեղեկություններ են տրամադրում բնակչության եկամուտների և սպառման վերաբերյալ: Որպես կանոն սպառումը չափվում է՝ բնակչության պատահական ընտրանքում ընդգրկված անձանց խնդրելով մանրակրկիտ գրառել իրենց սպառումը, օրինակ 14 օրվա ընթացքում, և նաև բացահայտել իրենց տարբեր եկամուտները, վճարված հարկերը և խնայողությունները: Հոդվածի բնօրինակում Պիսարիդեսը և Վեբերը (1989) համեմատում են սննդամթերքի ծախսերի և հայտարարագրած եկամուտների հարաբերությունը վարձու աշխատողների և ինքնազբաղվածների շրջանում: ³⁸ Նրանք ենթադրություն են անում, որ վարձու աշխատողները ճշգրիտ են հայտարարագրում իրենց եկամուտը՝ պայմանավորված երրորդ անձի կողմից հայտարարագրման կամ աղբյուրի մոտ հարկի պահման հանգամանքով: Ապա հնարավոր է գնահատել սպառման վրա ծախսվող եկամտի մասնաբաժինը: Այնուհետև Պիսարիդեսը և Վեբերը (1989) սպառման նույնական հակվածություն են ենթադրում տարբեր հարկ վճարողների մոտ: Հայտարարագրված եկամտի տվյալ մակարդակի պարագայում այնուհետև հնարավոր է հաշվարկել ինքնազբաղվածների սննդամթերքի ծախսերը: Եթե այն ավելի բարձր է, քան վարձու աշխատողների ցուցանիշը, ապա դա մեկնաբանվում է որպես եկամուտների թերհայտարարագրում:

Ինչպես նշվել է շրջանակի որոշման առաքելության ժամանակ, ինքնազբաղվածների մեծ մասը, ներառյալ անհատ ձեռնարկատերերը, ՀՀ օրենսդրության համաձայն շահութահարկով են հարկվում: Դրա հետևանքով Պիսարիդեսի և Վեբերի (1989) մշակած մեթոդաբանությունը, որը հիմնվում է Տնային տնտեսությունների սպառման վերաբերյալ հետազոտության տվյալների վրա, ԵՀ/ՄԱԿ-ի ճեղքի գնահատման համար հարմար չէ:

³⁶ «Միրված երեխան շատ անուններ ունի»:

³⁷ Søren Pedersen (2003), *The Shadow Economy in Germany, Great Britain and Scandinavia. A measurement based on questionnaire surveys*. Study no. 10 from The Rockwool Foundation Research Unit.

³⁸ Christopher A. Pissarides, Guglielmo Weber. “An expenditure-based estimate of Britain's black economy”. *Journal of Public Economics*. Volume 39, Issue 1, June 1989.

Աշխատանքային ծախսերի մեթոդ

Ստվերային/ընդհատակյա տնտեսության չափը կարող է չափորոշվել նաև դիտարկելով ՊԵԿ-ի գրանցումների համաձայն զբաղվածության և այլ, անկախ ուսումնասիրությունների, օրինակ՝ Աշխատուժի հետազոտությունների զբաղվածության համեմատության միջև տարբերությունը:

Աշխատուժի հետազոտությունը (ԱՌԻՀ), որը կատարում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՄՏՄՏ), համապատասխանում է աշխատանքի վերաբերյալ տվյալների հավաքման՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ուղեցույցերին՝ ապահովելով, որ հավաքված տեղեկությունները հուսալի և համադրելի լինեն: ԱՌԻՀ-ը հանգուցային դեր է կատարում զբաղվածության միտումների, ոլորտային վերլուծության և այլն վերաբերյալ վերլուծական տեղեկություններ ներկայացնելու հարցում:

ՊԵԿ-ը գրանցում է աշխատողների թվաքանակը և աշխատաժամանակը՝ ԵՀ հաշվարկից: Այս տվյալները դյուրին են դարձնում հարկային գրանցամատյանի գրառումների և ԱՌԻՀ տվյալների համադրությունը և ըստ այդմ՝ ԵՀ/ՄԱՎ ճեղքի գնահատումը ոլորտային մակարդակով:³⁹

2024 թ. սեպտեմբերի շրջանակի որոշման առաքելության ժամանակ ՊԵԿ-ին խորհուրդ էր տրվել կիրառել աշխատանքային ծախսերի մեթոդը: Ինչպես ավելի վաղ նշվել է, ԵՀ/ՄԱՎ ճեղքերի գնահատման առաքելության ավարտին ՊԵԿ-ը նշեց, որ օգտագործել է աշխատանքային ծախսերի մեթոդը և ստացել նման արդյունքներ, ինչպես սույն առաքելության ժամանակ:

Ազգային հաշիվների անհամապատասխանություններ

Ազգային հաշիվներում ստվերային կամ ընդհատակյա տնտեսության մեծությունը կարելի է գնահատել՝ ուսումնասիրելով տարբեր անհամապատասխանություններ և մնացորդային ազդեցություններ: Որպես կանոն, նշվածը ենթադրում է ազգային հաշիվների ընդհանուր՝ ստվերային/ընդհատակյա տնտեսության մեծ մասն ընդգրկող գնահատականի համեմատումը առաջնային վիճակագրության առանձին սեգմենտներից ստացված գնահատականների, այդ թվում՝ հարկային տվյալների հետ, որոնք սոսկ ներկայացնում են տնտեսության ֆորմալ մասը:

Ազգային հաշիվներով չափվում են թե՛ եկամուտները, թե՛ ծախսերը, սակայն այս ցուցանիշները ստացվում են վիճակագրական տարբեր աղբյուրներից՝ հանգեցնելով անհամապատասխանությունների: Ուստի կարևոր է հաշվապահական հաշվառման հաստատված սկզբունքներին համապատասխան այս ցուցանիշների փոխստուգումը:

³⁹ Søndergaard, J. (2023): “Undeclared Danish Labor: Using the labor input method with linked individual-level tax data to estimate undeclared work in Denmark”, *Journal of Economic Behavior & Organization*, 214:708-730. աշխատանքային ծախսերի մեթոդը լրացուցիչ մշակվել է՝ աշխատուժի հետազոտության տվյալները համակցելով անհատական մակարդակով զբաղվածության վերաբերյալ հարկային վարչարարության (անվանագրծված) տվյալների հետ

2024 թ. սեպտեմբերի շրջանակի որոշման առաքելության ժամանակ ՊԵԿ-ը ներկայացրեց ինչպես ՊԵԿ-ի, այնպես էլ ՖՆ-ի՝ ԵՀ/ՄԱՎ ճեղքի սեփական հաշվարկների հիման վրա ստացած ԵՀ/ՄԱՎ ճեղքի գնահատականները:

Թե՛ ՊԵԿ-ը, թե՛ ՖՆ-ն ԵՀ/ՄԱՀ ճեղքը գնահատել են՝ ուսումնասիրելով ազգային հաշիվների վիճակագրության և ՊԵԿ տվյալների միջև անհամապատասխանությունները: Աշխատավարձերը ստացվում են ազգային հաշիվներում թողարկումից և ավելացված արժեքից, իսկ գործատուներից աղբյուրի մոտ պահվող պոտենցիալ հարկը հաշվարկվում է այս գնահատված աշխատավարձերի հիման վրա: ԵՀ/ՄԱՎ ճեղքը է համարվում ազգային հաշիվներից հաշվարկված պոտենցիալ հարկի և ՊԵԿ ներկայացված հարկերի միջև տարբերությունը: ՊԵԿ/ՖՆ ստացած արդյունքները տատանվում էին ՀՆԱ-ի 1 տոկոսի շուրջը, ընդ որում ՖՆ գնահատականները փոքր-ինչ բարձր էին ՊԵԿ-ի գնահատականներից:

ՊԵԿ/ՖՆ արդյունքները որոշ չափով ավելի բարձր են, քան սույն զեկույցում գործառնական ստուգումների հիման վրա գնահատված արդյունքները, որոնք կազմում են ՀՆԱ-ի շուրջ 0.1-0.3 տոկոսը (Գծապատկեր 1):

Հավելված III. Հայաստանի պետական եկամուտների կոմիտեին տրամադրված նյութեր

- R ծրագրավորման լեզվով կոդը, որն օգտագործվել է ԵՀ/ՄԱՀ տվյալները մաքրելու համար
- R ծրագրավորման լեզվով կոդը, որն օգտագործվել է ԵՀ/ՄԱՀ մասով հարկային ճեղքի գնահատականներ ստանալու համար
- «Powerpoint» սահիկաշարը՝ հիմնական եզրահանգումներով
- CSV-file -ը՝ հարկային ճեղքերով